

կնութիւնը, երբ տղամարդուց կը պահանջեն հետևողականութիւն և նա կը դադարի իր համոզմունքները վաճառելուց և զիջումներ անելուց:

Եւ կը տիրէ ամենաընդերք երջանկութիւնը, որպիսին միայն կարելի է ձեռք բերել, ընդհանուր համակենցադի երջանկութիւն— ընդհանուր, մինչև հողածածկ անկիւնները... Այժմ այդ երջանկութիւնը մատչելի է միայն մի քանի ընտրեալներին... Նա աւելի ու աւելի լայն շրջան կը բռնէ... աւելի ու աւելի խորը կը թափանցէ... Ինչպէս որ արևն իր ճառագայթներով առաջ լուսատրում է միայն ոտքերի բարձունքները, իսկ յետոյ հետըզհետէ տարածում է իր լոյսը հովիտներն ու ձորերը...

(Կը շարունակուի)

* *
*

Ուզեցայ կնոջն հաւատալ նորից.
Լայ ու երազել առաջուայ նման,
Բայց արիւնոտուեց խեղճ սիրտս նորից.
Եւ որք մնացի, և թափառական:

Սէր, մնաս բարով, էլ քեզ չեմ նայի.
Չեմ բաղխի դուռդ ունայն քամու պէս.—
Բայց կուզենայի յաւիտեան լայի.
Եւ արտասունքս չը ցամաք սրտէս...

Ա. Իսահակեան